ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» մայիսի 2013թ. N 221

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչ Մարգարիտ Գրիգորյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի մայիսի 15-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից Մարգարիտ Գրիգորյանին հատկացնել 70000 /յոթանասուն հազար/ դրամ միանվագ օգնություն դստեր՝ Կարինե Արմենի Համբարձումյանի, ուսման վարձի վճարման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստի պաշտոնակատարին /Ա. Հովհաննիսյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան», ԱՇԻԲ հ/հ 247010109715001 0 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ